# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1

№ 4471-Ա « 15 » նոյեմբերի 2024 թ.

## ԵՐԵՎԱՆԻ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի 7-րդ կետով.

1. Հաստատել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ենթակայու-թյամբ գործող «Երևանի «Փոքրիկ երկիր» հ. 91 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ. 92 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ. 93 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ. 94 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ. 95 մսուր-մանկապարտեզ», «Երևանի «Հեքիաթ» հ. 96 մսուր-մանկապարտեզ» և «Երևանի հ. 97 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոններն զբաղեցնելու համար 2024 թվականի նոյեմբերի 18-ին ժամը 14:30-ին նախատեսված մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը (կցվում է):

2. Մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար Երևանի քաղաքապետի կողմից հանձնաժողովի քարտուղար նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Արևիատ Բաղդասարյանին:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**